ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 83

11-03-2022թ

# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄԱՐԶԻ «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՎԵՐԱԲԱՇԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-դ մասով, 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության 2021թ պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2016 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշումները՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1 . «Հայաստանի Հանրպետության 2022թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին «Հանրակրթական ուսուցում» 1146 ծրագրի տարրական, հիմնական, միջնակարգ ընդհանուր կրթության 11001, 11002 և 11003 միջոցառումներով

հատկացված գումարը բաշխել մարզի «Հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների միջև՝ N1 հավելվածի համաձայն:

2. Հանձնարարել մարզի «Հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին հատկացված գումարների շրջանակներում, սեղմ ժամկետում, ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների, կազմել նախահաշիվներ և ներկայացնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության վրա:

3/14/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված

Հաստատված է

ՀՀ Վայոց Ձորի մարզպետի

,,11,, մարտի 2022թ

N 83 որոշմամբ

ՀՀ 2022թ պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին 1146 ծրագրի <տարրական , հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթության > 11001,11002 և 11003 միջոցառումներով հատկացված գումարի վերաբաշխում ըստ ՊՈԱԿ-ների

| Հ/Հ | Դպրոցի անվանումը | Ընդամենը | Տարրական | հիմնական | Միջնակարգ | Տարրական | հիմնական | Միջնակարգ | Տարրական | հիմնական | Միջնակարգ | Ընդամենը հանրակրթություն մինչև վերաբաշխում | մնացորդ 01.01.2022թ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | Ազատեկի միջն (մ. դ.) | 41516.2 | 17701.8 | 16720.5 | 7093.9 | 2500 | | | 15201.83 | 16720.47 | 7093.886 | 39016.2 | 1098 |
| 2 | Արտավանի միջն. (լ. մ. դ.) | 34015.0 | 16122.0 | 12933.5 | 4959.5 | 3200 | | | 12921.99 | 12933.49 | 4959.491 | 30815.0 | 1189.2 |
| 3 | Բարձրունու միջն. (լ. մ. դ.) | 39891.0 | 10617.3 | 20639.4 | 8634.3 | 1499 | 1101 | | 9118.306 | 19538.38 | 8634.27 | 37291.0 | 1499.9 |
| 4 | Գողթանիկի հիմն. (լ. մ. դ.) | 28357.6 | 8199.8 | 20157.8 | 0.0 | -2000 | | | 10199.83 | 20157.77 | 0 | 30357.6 | 4531.4 |
| 5 | Գոմքի միջն. (լ. մ. դ.) | 37571.8 | 13777.7 | 17251.8 | 6542.3 | 1151 | | | 12626.72 | 17251.75 | 6542.303 | 36420.8 | 388.5 |
| 6 | Ջառիթափի միջն. (մ. դ.) | 51413.9 | 17058.7 | 23687.3 | 10667.9 | | 2958 | | 17058.71 | 20729.29 | 10667.94 | 48455.9 | 653.5 |
| 7 | Հերհերի միջն. (լ. մ. դ.) | 40501.3 | 14826.6 | 14561.2 | 11113.6 | 500 | | | 14326.57 | 14561.16 | 11113.61 | 40001.3 | 2053.5 |
| 8 | Հորսի հիմն. (լ. մ. դ.) | 22306.3 | 7735.8 | 14570.5 | 0.0 | -2000 | | | 9735.782 | 14570.48 | 0 | 24306.3 | 7261.1 |
| 9 | Մոզրովի հիմն. (մ. դ.) | 14410.0 | 2622.3 | 11787.7 | 0.0 | -2850 | -2958 | | 5472.326 | 14745.66 | 0 | 20218.0 | 7305 |
| 10 | Սերսի հիմն. (բ/լ մ. դ.) | 25048.4 | 8860.2 | 16188.3 | 0.0 | -2000 | -1101 | | 10860.17 | 17289.27 | 0 | 28149.4 | 9283.3 |
| | | | | | | | | | | | | | |
| | Ընդամենը | 335031.5 | 117522.2 | 168497.7 | 49011.5 | 0.0 | 0.0 | 0.0 | 117522.2 | 168497.7 | 49011.5 | 335031.4628 | 35263.4 |